

---

# Իրական շահառուների թափանցիկություն. համապատասխանության ապահովում և ռիսկերի կառավարում

## Վերապատրաստման դասընթաց

### մասնավոր սեկտորի ներկայացուցիչների համար

#### Դասընթացի նպատակը

Վերապատրաստման մոդուլը նախատեսված է մասնավոր հատվածի ներկայացուցիչների համար և նպատակ ունի բարելավել մասնակիցների գիտելիքը իրական շահառուների թափանցիկության ինստիտուտի, դրա կարևորության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում կիրառելի օրենսդրական պահանջների վերաբերյալ: Մասնակիցների կարողությունների զարգացումը թույլ կտա վերջիններիս ապահովելու իրենց համապատասխանությունը օրենսդրական կարգավորումներին և կառավարելու հնարավոր ռիսկերը:

#### Դասընթացի նկարագիրը

Փողերի լվացման սխեմաները հաճախ կառավարվում են բազմաթիվ գործարքների և կազմակերպությունների հետևում թաքնվող անձանց կողմից, որոնք խրթին կորպորատիվ կառուցվածքների և ֆինանսական միջոցների անդրազգային շրջանառության միջոցով փորձում են օրինականացնել իրենց հանցավոր եկամուտները: Կոռուպցիայի և փողերի լվացման խոշոր դեպքերը հաճախ ներառում են օտարերկրյա դերակատարներ և բարդ սխեմաներ, իսկ իրավապահ մարմինները

բախվում են ապացույցների ձեռքբերման և պատասխանատու անձանց հայտնաբերման հետ կապված խնդիրների:

Վերապատրաստման դասընթացն անդրադառնում է այն հարցին, թե ինչպես են իրական շահառուների թափանցիկության միջազգային չափանիշները ձևավորվել հանցավորների կողմից իրավաբանական անձանց և կազմավորումների չարաշահումը կանխելու նպատակով: Բիզնես ոլորտի ներկայացուցիչներին կներկայացվի «իրական շահառու» եզրույթի բովանդակությունը և դրա դերը փողերի լվացման դեմ պայքարի ներպետական համակարգերում: Դասընթացի թիրախում կլինի իրավաբանական անձանց իրական շահառուների բացահայտման ներպետական կանոնների, միասնական ռեգիստրի ձևավորման և համալրման արդյունքների ուսումնասիրությունը և լավագույն փորձը:

Դասընթացի շրջանակներում անդրադարձ է կատարվում իրական շահառուների թափանցիկությանն առնչվող բազմաբնույթ հարցերի: Մասնակիցները դասընթացի ավարտին կձևավորեն հետևյալ կարողությունները.

- Կհասկանան իրական շահառուների թափանցիկության առնչվող բարեփոխման կարևորությունը բիզնեսի համար,
- Կպատկերացնեն «իրական շահառու» եզրույթի բովանդակությունը միջազգային փորձի և ներպետական օրենսդրության համատեքստում,
- Կձանոթանան իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների բացահայտման և հրապարակման միջազգային չափանիշներին,
- Կտիրապետեն Հայաստանի Հանրապետության տարածքում իրավաբանական անձանց իրական շահառուների բացահայտման օրենսդրական պահանջներին,
- Կհասկանան իրական շահառուների թափանցիկության պահանջներին չհամապատասխանելու դիսկերը,
- Կտիրապետեն իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ներկայացման տեխնիկական ու բովանդակային առանձնահատկություններին,
- Կձանոթանան իրական շահառուների թափանցիկության միջազգային լավագույն փորձին:

## Դասընթացի կառուցվածքը

### Թեմա 1. Իրական շահառուների բացահայտման պահանջների զարգացումը և նպատակները

---

Այս թեմայի շրջանակներում կբացահայտվի իրական շահառու հասկացության բովանդակությունը, կուսումնասիրվեն «իրավաբանական սեփականատեր» և «իրական շահառու» եզրույթների տարբերությունները, կներկայացվի ֆինանսական շարժերի և իրավաբանական անձանց հետևում կանգնած և դրանք վերահսկող անձանց բացահայտման կարևորությունը կոռուպցիայի և փողերի լվացման դեմ պայքարի համատեքստում: Մասնակիցները կծանոթանան ԻՇ բարեփոխման նշանակությանը բիզնեսի համար, իրական շահառուների թափանցիկության պահանջներ պարունակող հիմնական միջազգային փաստաթղթերին և վերջին տարիների միտումներին՝ հատկապես իրավաբանական անձանց իրական շահառուների բաց ռեգիստրների ձևավորման և տվյալների արժանահավատության նկատմամբ վերահսկողության ներդրման տեսանկյունից:

---

#### Օգտակար հղումներ՝

- “What is beneficial ownership transparency?”, *Open ownership*, online [here](#).
- «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի հունիսի 3-ի թիվ ՀՕ-246-Ն օրենքի և հարակից օրենքների նախագծերի ընդունման հիմնավորում, 33-39 կետեր, առցանց [այսպեղ](#).
- *Guidance on Beneficial Ownership of Legal Persons*, March 2023, FATF, paras 1-10, online [here](#).
- *Directive (EU) 2015/849 of the European Parliament and of the Council of 20 May 2015*, Article 3 (6), online [here](#).

## **Թեմա 2. Իրական շահառուների բացահայտման տեղը փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ներպետական համակարգերում**

---

Այս թեմայի շրջանակներում դասընթացի մասնակիցները կձանոթանան փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ներպետական համակարգի ներքո հաշվետվություն ներկայացնող անձանց ցանկին, այդ անձանց կողմից իրենց հաճախորդների պատշաճ ուսումնասիրություն իրականացնելու, այդ թվում՝ հաճախորդների իրական շահառուների բացահայտման հետ կապված պարտականություններին: Հակիրճ անդրադարձ կկատարվի նաև հաճախորդի իրական շահառուի ինքնության ստուգման, հավաքված տվյալների պահպանման և դրանք իրավասու մարմիններին հասանելի դարձնելու հետ կապված կարգավորումներին:

---

### ***Օգտակար հղումներ՝***

- *Փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի միջազգային ստանդարտներ, ՖԱԹՖ հանձնարարականներ (2012թ. փետրվար), Հանձնարարական 10, 17-19, առցանց [այսպետ](#).*
- *«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենք, Հոդվածներ 3, 16, 22.*

### **Թեմա 3. Իրավաբանական անձանց իրական շահառուների միասնական ռեգիստրների ձևավորումը և հայտարարագրման պահանջների ներդրումը**

Այս թեմայի քննարկման ընթացքում մասնակիցներին կներկայացվեն իրավաբանական անձանց իրական շահառուների պետական ռեգիստրների ստեղծման միջազգային միտումները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում իրավաբանական անձանց իրական շահառուների հայտարարագրման համակարգի ներդրման պատմությունը: Մասնակիցներին մասնավորապես կներկայացվեն.

- 2009 թվականից սկսած Կենտրոնական բանկի խորհրդի հաստատած կարգով իրավաբանական անձանց իրական շահառուների հայտարարության ներկայացման դեպքերը և կանոնները,
- հանքարդյունաբերության ոլորտում գործունեություն ծավալող իրավաբանական անձանց իրական շահառուների բացահայտման նախաձեռնության հիման վրա ձեռնարկված քայլերը,
- Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված բոլոր իրավաբանական անձանց համընդհանուր հայտարարագրման համակարգի ներդրման ժամանակագրությունը:

Մասնակիցների հետ կքննարկվեն նաև իրական շահառուների ռեգիստրում հավաքվող տեղեկությունների համադրելիությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տվյալների շտեմարաններում առկա տեղեկությունների հետ, ինչպես նաև պետական գնումների ոլորտում իրական շահառուների բացահայտման հետ կապված առկա իրավիճակը:

#### **Օգտակար հղումներ՝**

- *Directive (EU) 2015/849 of the European Parliament and of the Council of 20 May 2015, Article 30 (3).*
- *International Standards on Combating Money Laundering and the Financing of Terrorism & Proliferation, (2012-2023) FATF, Interpretive Note to Recommendation 24 (Transparency and Beneficial Ownership of Legal Persons), 7 (b) (i), online [here](#).*
- *Կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունվարի 27-ի թիվ 20-Ն որոշում, առցանց [այստեղ](#).*
- *Իրական սեփականատերերի բացահայտման գծով վավերացման արդյունքներով Հայաստանը ստացել է ամենաբարձր՝ «բավարարող առաջընթաց» գնահատականը, 10.06.2021, առցանց [այստեղ](#).*
- *«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի*

պեղական հաշվառման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի հունիսի 3-ի թիվ ՀՕ-246-Ն օրենք, Հոդված 9, առցանց [այսպեղ](#)

- «Հանրային ծառայության մասին» օրենք 42 (1)
- «Գնումների մասին» օրենք, Հոդված 28 (2) (2)

#### **Թեմա 4. Իրավաբանական անձանց իրական շահառուների բացահայտման կանոնները Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված կազմակերպությունների համար**

---

Այս թեմայի շրջանակներում կներկայացվեն Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված իրավաբանական անձանց կողմից իրենց իրական շահառուներին հայտնաբերելու և հայտարարագրելու հետ կապված պարտականությունները: Մասնակիցները կձանոթանան.

- կազմակերպությունների կողմից պատշաճ ուսումնասիրություն իրականացնելու և փաստաթղթերի պահպանման պահանջներին,
- իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի, այդ թվում՝ փոփոխված տեղեկությունների ներկայացման ժամկետներին,
- իրական շահառուների հայտարարագրման էլեկտրոնային համակարգին և դրանից օգտվելու կանոններին,
- հայտարարագրի գրանցման համար պետական տուրքի գանձման դեպքերին և գանձվող պետական տուրքի չափին,
- հայտարարագրում ներկայացման ենթակա տեղեկությունների ծավալին և հայտարարագրին կից ներկայացվող փաստաթղթերի տեսակներին,
- ցուցակված բաժնետոմսերով ընկերությունների համար նախատեսված առանձնահատկություններին:

---

#### **Օգտակար հղումներ՝**

- «Իրավաբանական անձանց պեղական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պեղական հաշվառման մասին» օրենք, Գլուխ 12.1.
- ՀՀ արդարադատության նախարարի 2021 թվականի օգոստոսի 30-ի թիվ 416-Ն հրաման, առցանց [այսպեղ](#)
- Իրական շահառուների հայտարարագրման էլեկտրոնային [համակարգ](#)
- Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրերի լրացման հետ կապված օգտակար [նյութեր](#)

- *Իրական շահառուների հայտարարագրման վերաբերյալ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից մշակված օգտակար [նյութերը](#)*

## **Թեմա 5. Իրավաբանական անձանց իրական շահառուների բաց ռեգիստրների ձևավորման միջազգային միտումները անձնական տվյալների պաշտպանության համատեքստում**

---

Այս թեմայի շրջանակներում մասնակիցների հետ կքննարկվեն իրավաբանական անձանց իրական շահառուների բաց ռեգիստր ունենալու շահի հավասարակշռման հարցը անձնական տվյալների պաշտպանության և մասնավոր կյանքի անձեռնմխելիության երաշխիքների համատեքստում: Մասնակիցներին կներկայացվի Եվրոպական միության արդարադատության դատարանի որոշումը, որով անվավեր է ճանաչվել կազմակերպությունների իրական շահառուների տվյալները հասարակության ցանկացած անդամի բոլոր դեպքերում հասանելի դարձնելու ԵՄ հրահանգի պահանջը:

---

### ***Օգտակար հղումներ՝***

- *«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենք, Հոդված 6.*
- *Data protection and privacy in beneficial ownership disclosure, 20 May 2019, The B Team, The Engine Room, Open Ownership, online [here](#).*
- *Press release No 188/22 22, Court of Justice of the European Union, November 2022, online [here](#).*

## **Թեմա 6. Իրավաբանական անձանց իրական շահառուների թափանցիկության պահանջների խախտման հետևանքները**

---

Այս թեմայի շրջանակներում մասնակիցներին կներկայացվեն իրավաբանական անձանց իրական շահառուների բացահայտման պահանջների խախտման արդյունքում վրա հասնող օրենսդրական հետևանքները: Մասնավորապես կքննարկվեն դատական կարգով իրավաբանական անձի հարկադիր լուծարման հնարավոր դեպքերը, վարչական պատասխանատվության հիմքերը և կիրառելի սանկցիաները, ինչպես նաև վարչական պատասխանատվության դեպքերի համար սահմանված խրախուսական նորմը: Մասնակիցներին կներկայացվեն նաև քրեական պատասխանատվության հնարավոր դեպքերը և կիրառելի սանկցիաները:

---

### ***Օգտակար հղումներ՝***

- *«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենք, 60.5 (6)*
- *Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրք, Հոդված 169.29*
- *Քրեական օրենսգիրք, Հոդված 294*
- *Իրական շահառուների թափանցիկության բարեփոխման վերաբերյալ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից մշակված օգտակար [նյութերը](#):*